

է. զոր ինդրէ կանգուն ի վերայ ստից. իսկականն լինելոց է ի հնու թեանցն հաւաստի աւանդութեամբ նմանութիւնն ելոց է. լաւ շէրչիվէով, եւ ի ներքոյ զանուն իւր յիշատակեալ: Նաեւ մինչեւ ի տէրութենէդ ոչ առնում գիր, ոչ գրեմ, զի տակաւին գտեղիդ ոչ գիտեմ. եւ սղ լեր ի Տէր ի պարծանս նուաստագոյն սրդեկի քոյ որ եմ

Յիսուսի ծառայ Արութիւն Պետանեան Վ. Պօլսեցի:

(Նոյն թղթոյ վրայ նոյն գրով):

Յատկական սիրով սիրեցելոյ առ յինէն յօհաննիսի խոհեմազարդ եւ մաքրակենցաղ վարդապետիդ համբոյր սրբազան աջոյն կարօտիւ ընծայեմ:

Յայնմ ժամու. անջատեալ եմ ի ձէնջ որպէս մարմին ի հոգւոյ՝ լքեալ լուծեալ կմախեալ թօշկացայ. բայց յուսով ի սէր սրտի միութեան, ի նշան որոյ՝ գրաւոր անբնդհատ հաղորդակցութեան՝ ուշաբերեալ զգաստացայ, արդ տես դու ինձ աստէն եւ զգիպուածոյս զարմանաւոր հանդիսաւորութիւն. քանզի ելի յաւազգրան նուահանգիստն, եւ տեսի՝ ի բարձր եղբ նորին իբր ի դիտանոցէ դիտաւորել՝ զեղբայր քո զմահտեսի Մուրատն, որ փութացեալ առ իս զձէնջ հարցանէր, եւ զնաւ ձեր տեսեալ խնդայր զլնթացան օրհնէր. ասեմ՝ նմա, աղօթս արա, զի զպարանս պատուականս բարձի ի նա, յորմէ ահա գամ, որ զայնպիսի բանս բարբառեաց յանգէտս, մինչեւ՝ ի սրտէս ի ծով արտասուաց ողորկ. ապա ի լսելն զկնի ութ աւուրց՝ ծանուցեալ զայնօրեայն ասացեալս՝ զի՛ւ ոչ ասաց ո՞վ անգութ՝ շատ համարեցար նաւու հասանել եւ զկարտօս իմ առնուլս եւ զայլ նմանս. զոր իմոյսանն մխիթարեալ հանդարտեցի: Արդ՝ ի Պօղպէն զգրեալդ գիր մատուցի, որ կրկին ետ ինձ գրել